ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՎԵՐԱՀՍԿԻՉ - ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

26.06. 2021թ.

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների

Ազգային ժողովի 2021թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 7 օրվա ընթացքում նախընտրական քարոզչությանն ուղղված ծախսեր կատարելու նպատակով Կենտրոնական բանկում բացել են նախընտրական հիմնադրամներ:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Կենտրոնական բանկից 3 աշխատանքային օրը մեկ, Կենտրոնական ընտրական հանձնաձնաժողովի Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (այսուհետ՝ Վերահսկիչ–վերստուգիչ ծառայություն) ստացվել են տեղեկանքներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում մուտքերի և ելքերի վերաբերյալ, որոնց հիման վրա Վերահսկիչ–վերստուգիչ ծառայության կողմից

կազմվել են ամփոփ տեղեկանքներ և տեղադրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Տեղեկանքներն իրենց մեջ ներառել են տեղեկություններ կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում կատարված մուծումների և ելքերի չափերի, դրանց ժամանակագրության, ինչպես նաև հիմնադրամում մնացորդների վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ քան 3 օր առաջ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն են ներակայացրել իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերը և պայմանագրերը: Հայտարարագրերն իրենց մեջ տեղեկություններ են ներառել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների և դրանց ժամանակագրության, ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նկարագրված ապրանքների և ծառայությունների ձեռքբերման ծախսերի և դրանց ժամանակագրության, ձեռքբերման ծախսերը հավաստող փաստաթղթերի, դեռ չվճարված պարտավորությունների չափերի, ինչպես նաև հիմնադրամի միջոցներից վճարված, սակայն հայտարարագրման ոչ ենթակա ծախսերի մասին: Հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը նախընտրական հիմնադրամներում մուծումների և ծախսերի վերահսկողությունն իրականացրել է՝

- **Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքների**
- **Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերի**

- Հիմնադրամից կատարված ծախսերը հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի

- Ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստացված տեղեկությունների ուսումնասիրության հիման վրա:

Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ազգային ժողովի Բարգավաճ Հայաստան և Իմ քայլը խմբակցությունները վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակել են Հայաստանի Հանրապետությունում աուդիտորի որակավորում ստացած մեկ աուդիտորի, որոնց հնարավորություն է ընձեռնվել ուսումնասիրել նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկանքներում և կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված հայտարարագրերում տվյալների միջև առկա են տարբերություններ, որը առաջացել է ծառայություններ մատուցող սուբյեկտների գումարների հետ վերադարձի արդյունքում, որի մասին տեղեկատվությունը ներառված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրված Կենտրոնական բանկի ամփոփ տեղեկանքի ծանոթություն բաժնում:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց նաև, որ նախընտրական հիմնադրամներում առկա է ընտրական օրենսգրքով սահմանված սուբյեկտների կողմից նախընտրական հիմնադրամ մուծված գումարի առավելագույն չափի գերազանցում՝ 3 193 600 դրամի չափով, որը փոխանցվել է պետական բյուջե:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ Սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) դիմումի հիման վրա Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է հիմնադրամից վճարումներ կատարել նաև

քվեարկության օրվանից հետո, բայց մինչև քվեարկության օրը կատարված գործարքների համար: Մասնավորապես՝

- «Պատիվ ունեմ» կուսակցությունների դաշինքին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 22.06.2021թ-ին մարել 130 000 դրամի պարտավորություն
- «Հայաստանի Դեմոկրատական» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 5 626 250 դրամի պարտավորություն
- «Մեր տունը Հայաստանն է» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 22.06.2021թ-ին մարել 2 317 400 դրամի պարտավորություն
- «Ինքնիշխան Հայաստան» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 2 317 400 դրամի պարտավորություն
- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 1 662 000 դրամի պարտավորություն.
- «Ազատ հայրենիք» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 1 119 600 դրամի պարտավորություն.
- «Հանրապետություն» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 350 000 դրամի պարտավորություն.
- «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 50 000 դրամի պարտավորություն.
- «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 25.06.2021թ-ին մարել 300 000 դրամի պարտավորություն.

- «Հայոց Հայրենիք» կուսակցությանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ թույլատրվել է 23.06.2021թ-ին մարել 156 000 դրամի պարտավորություն

Նախընտրական քարոզչության և դրանից հետո ընկած ժամանակահատվածում նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը վերաբերող դիմում–բողոքներ չեն ստացվել:

Համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը ***փ ա ս տ ու մ է***, որ.

Բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի
Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ Տ. ԲԱԲԻԿՅԱՆ